ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **14/04/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԻ

2023 թվականի ապրիլի 14-ին, ժամը 10:00-ին Սիսիանի համայնքապետարանի շենքում, նիստերի դահլիճում տեղի ունեցավ Սիսիանի նորընտիր ավագանու առաջին նիստը:

Ավագանու նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ՝
Գարիկ Հակոբյանը, Արմինե Հարությունյանը, Օսաննա Մարկոսյանը, Լիլիթ Հարությունյանը, Կորյուն Մուրադյանը, Նարա Հովհաննիսյանը, Քնարիկ Շահգալդյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Աննա Կարապետյանը

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի՝ նիստը վարում էր նիստին ներկա տարիքով ավագ անդամը: Ավագանու անդամներից տարիքով ավագ անդամը Սուրեն Վարդանյանն էր:

Համաձայն Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կողմից ներկայացված գրանցման թերթիկի, նիստին մասնակցում էր Սիսիանի համայնքի ավագանու 21 անդամներից 16-ը:

Բացակա էին՝ Մարինե Գրիգորյանը, Գևորգ Դավթյանը, Դավիթ Դավթյանը, Անի Հարությունյանը, Ջիվան Մարգարյանը:

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:
Նիստը ուղիղ հեռարձակվում է:
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի ընտրությունների արդյունքում 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 02-ի «Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի արտահերթ ընտրությունների քվեարկության արդյունքներն

ամփոփելու մասին» թիվ 21-Ա և «Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի արտահերթ ընտրությունների արդյունքներով Սիսիան համայնքի ավագանի ընտրվելու մասին» թիվ 22-Ա որոշումների համաձայն Սիսիան համայնքի ավագանու անդամներ են ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից՝ 13 անդամ, «Հայաստանի Հանրապետական» կուսակցությունից՝ 5 անդամ, «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից՝ 3 անդամ:

Համաձայն թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 12-ի «Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N15 արձանագրության նորընտիր ավագանու անդամներ են՝

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Ասատրյան Ավագ Գևորգի
2. Հակոբյան Հայկ Հոկտեմբերի
3. Ավետիսյան Աննա Արկադյայի

«Հայաստանի Հանրապետական» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Մարգարյան Ջիվան Արսենի
2. Դավթյան Դավիթ Ռուշանի
3. Հարությունյան Անի Դերենիկի
4. Դավթյան Գևորգ Սեյրանի
5. Գրիգորյան Մարինե Սամվելի

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից՝

1. Հակոբջանյան Արմեն Բենյամինի
2. Միրզախանյան Արմենակ Վարուժանի
3. Գրիգորյան Անիկ Մարտունիկի
4. Հովհաննիսյան Կարեն Գրիշայի
5. Աղաջանյան Աշոտ Բաբիկի
6. Պետրոսյան Անահիտ Շավարշի
7. Առաքելյան Հովսեփ Հրաչի
8. Եղիազարյան Երվանդ Լորիկի
9. Թամրազովա Բելլա Մաքսիմի
10. Դանիելյան Հրաչյա Մարտիկի
11. Գևորգյան Գևորգ Վիլիկի
12. Յազուլյան Նախշուն Լևոնի
13. Վարդանյան Սուրեն Ռազմիկի

Պարոն Սուրեն Վարդանյանը ներկայացրեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակի առաջին հորիզոնականում պարոն Արմեն Հակոբջանյանն է, որն էլ օրենքի ուժով համարվում է ընտրված համայնքի ղեկավար:

Պարոն Հակոբջանյանը շնորհակալություն հայտնեց համայնքի բնակչությանը՝ բարձր վստահության համար:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի /սահմանադրական օրենք/ 142.2-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 02-ի «Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի արտահերթ ընտրությունների քվեարկության արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 21-Ա և «Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի արտահերթ ընտրությունների արդյունքներով Սիսիան համայնքի ավագանի ընտրվելու մասին» թիվ 22-Ա որոշումները, 2023 թվականի ապրիլի 12-ի «Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N15 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության Վարչական դատարանի 2023 թվականի ապրիլի 11-ի թիվ ՎԴ/2034/05/23 վարչական գործով որոշումը, հաշվի առնելով, որ համայնքի ավագանու ընտրության արդյունքով ընտրությանը մասնակցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին ու կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձը՝ Արմեն Բենյամինի Հակոբջանյանն օրենքի ուժով համարվում է ընտրված համայնքի ղեկավար.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի համամասնական ընտրակագով ընտրված նորընտիր ավագանու 2023 թվականի ապրիլի 14-ի առաջին նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական գումարման օրը սահմանելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի նորընտիր ավագանու խմբակցություններ ստեղծելու մասին:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 01-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով և 74-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի երդման արարողությունը կազմակերպել 2023 թվականի ապրիլի 17-ին, ժամը 11:00-ին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի երդման արարողությունն անցկացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ ք. Սիսիան, Սիսական 44Ա հասցեում՝ «Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի դահլիճում:
3. Սիսիան համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի վրա:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 02-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով,

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի մայիսի 19-ին, ժամը 10:00-ին:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 03-Ա/

Հարց – Հայկ Հակոբյան – Ընտրված օրը ինչո՞վ է պայմանավորված:

Պատասխան – Աննա Կարապետյան
Քանի որ մինչ այդ պետք է լինեն մի քանի արտահերթ նիստեր, հերթական գումարման օրը ընտրվել է աշխատանքները հասցնելու համար:

Հարց – Հայկ Հակոբյան – Այդ դեպքում կարո՞ղ է խտանա աշխատանքները:

Պատասխան – Աննա Կարապետյան
Ոչ, ընտրվել է հնարավորինս օպտիմալ ժամկետ:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածով և հիմք ընդունելով թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 02-ի «Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 26-ի արտահերթ ընտրությունների արդյունքներով Սիսիան համայնքի ավագանի ընտրվելու մասին» թիվ 22-Ա որոշումն ու 2023 թվականի ապրիլի 12-ի «Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N15 արձանագրությունը.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու հետևյալ խմբակցությունները՝
   1) «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն,
   2) «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցություն,
   3) «Քաղաքացու որոշում» խմբակցություն:
2. Հանձնարարել ավագանու խմբակցություններին Սիսիան համայնքի ղեկավարին գրավոր ներկայացնել խմբակցության կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 04-Ա/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՎԱԳ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱՋՈՒԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Աննա Կարապետյանը_____